

Գործիս սկզբնական դժուարութեանցը մէջ՝ մեր զըլ-  
խաւոր աղբիւրներն եղած են այն յիշատակարանները,  
որ անցեալ ու նախանցեալ դարին Պոլիս տպուած գիր-  
քերուն հաին կը դանուին. վասն զի չուզեցինք անձնիւր  
տո՛մի սերունդին՝ իր նախորդներուն վրայ պատմած-  
ները վաւերական պատմութիւններ սեպել, ոչ ալ հա-  
կառակ վկայութիւնները բանի տեղ դնել՝ խրտչելով  
միապէս տո՛մային նախապաշարութեանն ու նախանձի  
զրոյցներէն:

Իժազդաբար երկտող այդ յիշատակարաններն ալ  
անունէ ու կարգ մը մանտեսիական անկարեւոր պա-  
րազաներէ զատ՝ բան չէին յիշատակեր, ու Պոլիսի  
տպագրութեան սկիզբն ալ 1367 թուականէն անդին  
չանցնելով՝ հարիւր տարուան պակաս մը կը մնար, զոր  
չկըրցան լեցունել ըստ արժանւոյն աւանդութիւնն և  
ձեռագիր տետրակները:

Յիշատակարաններուն պակասը լեցուցինք բազմա-  
հմուտ դրագէտներու հատորաւոր գործերէն ու ժամա-  
նակակից արձանագրութիւններէ՝ Քնճալ Կաթաբա մօտ  
դժուարութիւններով, և այդ հարիւր տարուան թերոյթն  
ալ՝ փորձեցինք պարտրկել կենցաղագէտ ծերունիներու  
և պատմական հետեւուն զնացքի մը ենթադրութիւն-  
ներով որ աւաստիկ:

Չգիտենք հաւաստեալ՝ թէ 1435ի մեծ դէպքին ա-  
կանատես Աբրահամ վարդապետին յիշատակած «Աս-  
տուածատուր Սաթրլիբընն, և Սիմէոն Բարի Փաշին,  
և պապայի որդի Այվատն (ու) Պարոն Գէորգն Եշիմ  
հաճին» ընդ ամէնը չորս հատիկ տաղաչափեալ ան-  
կիւրացիներ, իրենց տունն և տեղը ձգելով Պոլիս չե-